Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒԻՄ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1989Թ.

Կումայրեցի Հայդեր, վեցհար հարազատներ Մեր,

Ճիշ՞տ էր դուք այն օրը, ուղիղ մէկ տարի առաջ էր: Օր չէր այդ, այլ դժոխքի տեսիլ, ահարեկ կործանում, երկրի փլուզում եւ յետոյ՝ մահուան ուրուականն, դիակներ, դիակներ, դազաղներ, գերեզմաններ, սուգ ու ճիւաղ աղաղներ, մայրեր խենթացած, ողջ–ողջ մարմիններ թաղուած աւերակներուն տակ, ժպիտներ սառած, հոգիներ մեռած, յոյսի աստղերը բոլոր յանգած, կեանքի նշագը խաւարում կորած ...

Ո՞վ, ո՞վ պիտի պատկերի դժոխքը այդ օրուայ, ո՞վ պիտի չափի վիհը ձեր վշտի, աղաղներ սարսափի, արիւն արցունքի ...

Եւ յետոյ մի ամբողջ տարի, անհամասում օրեր, ողբ ու արտասուք, զրկանք, տառապանք, անվերջ հառաչանք ...

Սիրելիներ, ինչպէս մէկ տարի առաջ, այն դժոխք օրերին, այսօր էլ ես եկել եմ ձեզ մօտ վերտին, ձեզ հետ ողբալու ձեր ճակատագիրը դժուար, ողբալու ձեր մեռելներուն, ձեր երեխաներուն եւ աղօթելու նրանց հոգիների համար:

Այն օրը, Դեկտեմբերի 11ին, ես Ս. Էջմիածնից եկել էի ձեզ վշտակցելու, ձեզ մխիթարելու, բայց զգացել էի իմ անզօրութիւնը, իմ յուսահատութիւնը: Հոգուս մէջ աղաղակում էի Սաղմոսերգուի նման՝

«Փրկիր մեզ, Տէր Աստուած, ջրերը հասնում են մեր վզին, ընկղմում ենք դէպի խորը անդնդի եւ տեղ չունենք ոտ դնելու: Ջրի հոսանքները տանում են մեզ, եւ հեղեղները անցնում են մեր գլխի վրայով: Մեր ուժերը սպառել են աղաղակելուց, մեր կոկորդը այրում է կրակի մէջ, մեր աչքերը հանգում են օգնութիւն սպասելուց՝ Աստուած» (Սաղմ. ԿՀ. 2–4):

բարձունքին վրայ, ուր մեր նախնիք աւելի քան տասնըեօթը դարերէ ի վեր երկրպագած և ինքզինքնին նուիրած են այդ գաղափարին, այս սուրբ կամարներուն ներքև, ուր Գլուխ մը և Աթոռ մը յիշատակը, այսինքն մտածումի մը և իշխանութեան մը խորհուրդը մեր առջև կը յուսատրեն մեր գործունէութեան գաշտը, ամրացնենք սիրոյ և նուիրումի մեր ուխտը այն ժողովուրդին համար, որուն արեան և հաւատքին ժառանգութեան զաւակներն ենք ամէնքս, և առաւելագոյն եռանդով և գիտակցութեամբ պատրաստուինք այն ծառայութեան, որ բաժինն է մեր բաժակին, և գայն ցնդուենինք ի մխիթարութիւն մեր սիրելի ազգին, ի շինութիւն մեր Սուրբ Եկեղեցւոյն, Եկեղեցւոյն Հայաստանեայց, ի պարծանս առաքելական այս Սուրբ Աթոռին, և ի փառս Աստուծոյ Հօր և Որդւոյն Միածնի և Սուրբ Հոգւոյն, Ամենասուրբ Երրորդութեան, ար է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ

digitised by A.R.A.R.@

Այսօր ճկէք ծունկ չմեծ բոլորս՝ զոհուածներուն յիշատակի առաջ եւ ուխտենք երբեք չմոռանալ նրանց, ուխտենք սուրբ պահել նրանց անունները, ուխտենք ապրել նրանց եռագոյներով: Ուխտենք արժանի դառնալ նրանց զոհաբերումին՝ մեր կեանքի գործերով, մեր հայրենասէր ոգեշնչումով ու միութեամբ: Դիտեմ, անարկու երկրաշարժից յետոյ մեր կեանքը ծանրօրէն տառապալից եղաւ, նոյնիսկ յուսահատական, օրեր եւ օրեր շարունակ: Ճշմարիտ է, որ օգնութիւններ տեղացին ամէն կողմից, թէ՛ մեր պետութեան լայն միջոցառումներով, թէ՛ արտասահմանեան երկրներից առատաձեռն նուիրատուներով, թէ՛ Սիփանի Հայութեան եղբայրական օգնութիւններով, սակայն տեսնում եմ որ դեռեւս ծով կարիքների մէջ էք գտնւում, եւ շատերը դեռեւս անտուն էք, ծանր նեղութեանց մէջ:

Մեր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը երկրաշարժի առաջին օրերից սկսեալ ջանաց իր օգնութեան ձեռքը երկարել՝ աղէտեալներին բաժանելով արտասահմանից ստացուած դեղօրայք, սննդամթերք ու հագուստեղէն, նաեւ հոգեկան մխիթարութիւն բաշխելով ձեզ բոլորիդ:

Ես այսու էլ, մեր Եկեղեցին ու մեր հոգեւորականները պիտի շարունակեն իրենց պարականութիւնը կատարել:

Ի մխիթարութիւն ձեզ, կամենում եմ աւետել, որ Սուրբ Էջմիածինը պիտի չմոռանայ նաեւ վերաշինութիւնը եւ բարեկարգումը ձեր աղօթի Տներին: Անդ արդէն իսկ վերջանալու մօտ է վերաշինութիւնը ձեր այս տաճարի՝ Լենինականի հաղաթի Ըօթվէրէ Աստուածամօր մայր եկեղեցու, որի կամարների տակ աղօթում ենք մենք այժմ: Պիտի վերանորոգուեն նաեւ Սեբաստացւաց ու Կիրովականի եկեղեցիները, որոնք բարեբախտաբար կանգուն վիճակում են: Ապագային պիտի վերակառուցենք ձեր հաղաթի խորհրդանշական Ս. Ամենափրկիչ եկեղեցին, նաեւ ծրագրել ենք կառուցել նոր մի յուշարձան–եկեղեցի Սպիտակում, յաւերժացնելու համար յիշատակը բոլոր աղէտեալ հաղարների ու գիւղերի զոհուածների: Առաջիկայ տարիներին յոյս ունենք, որ կեանքի կը կոչուեն այս եկեղեցաշինական ծրագրերը:

Սիրելի հաւատացեալներ, ես յատկ յիշում եմ իմ այցելութիւնը Լենինականի, երկրաշարժից չորս օր յետոյ: Կիրակի օր էր: Ի՜նչ անաւոր վիճակ էր այստեղ, կործանուած շէնքեր, փլած տներ անհամար, ամէն տեղ աւերակ, ամէն հայլափսխին լաց ու կոծ, եւ դագաղներ, դագաղներ, նաեւ հոգիների աւերակ ու կործանում:

Ցիշում եմ ձեր դէմքերը, արտասուից ջարդած ձեր հայեացքները: Ցիշում եմ ձեր յուսահատ աղերսները, թէ՛ «Վեհափառ, ի՞նչ պիտի լինի մեր վիճակը»: Ցիշում եմ նաեւ Ամենափրկիչ եկեղեցու աւերակների վրայ իմ հանդիպումը ձեզ հետ: Ցիշում եմ, այդ պահին, հեռուից մի երիտասարդի ձայնը, թէ՛ «Բայց, Վեհափառ, չմոռանանք նաեւ մեր Ղարաբաղը»: Ես այդ ձայնը չեմ մոռացել ու չեմ էլ մոռանալու: Դա արդարութեան ձայնն էր, մեր պատմութեան ձայնն էր, մեր ապագայի կանչն էր:

Սիրելի կումայրեցիներ, ձեր զոհեալների գերեզմանների առաջ, ձեր աղօթից յետոյ, վասն նրանց հոգիների հանգստեան, ոտի կանգնենք եւ ձեր

digitised by A.R.A.R.@

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԻՆԸ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԼՈՑՍԻՆ ՏԱԿ

Մանաւանդաբար անցեալին և գրեթէ բոլոր նաւագ քաղաքակիրթ երկիրներու մէջ մինչև այսօր իսկ (հաղարաւոր երկիրներ ընդհանուր վերապրիրին ներքև կարելի է զնահատել գրեթէ բոլոր քրիստոնեայ պետութիւնները այսօրուան, Աստուածաշունչը չճանչցող ժողովուրդներէն ձախողցիները և հրեաները բացառութիւն կը կազմեն), կինը կը նկատուէր առարկայ, երկրորդ կարգի արարած մը, նուագ իրաւունքներով։ Այս տեսութիւնը կու գար անշուշտ Աստուածաշունչէն, որ իր առաջին էջին մէջ մեզի կ'ըսէ թէ Աստուած նախ Ադամը ստեղծեց և ապա ըսաւ, իբրև անոր օգնականը (բառը ամանց մտ հաւանիկ է ծագային), առանանաւած գտնացած առլոս մարմնառար իր հնչախառն ցանկութիւններուն, այլ խօսքով՝ իր կիրքերուն ու կարիքներուն։ Կու գար նաև ու մանաւանդ անկէ՝ որ ըսաւ եղաւ առաջին մեղանչողը, կնոջ չնորհիւ մեզքն (ու անոր հետևանք մահը) մտան աշխարհ։ Տակաւին կայ կպմախօսական առասպելը, քանի որ մարմնով ստեղի փոքրակազմ ու ակար է էգը (մտանան չընդհ իր երկարակեցութիւնը), հնազկու ու յարձանդամ արբէն նուաճուելու, տիրակալուելու ենթակայ։

Այս սխալ տեսութիւնը սրբագրուեցաւ Քրիստոնէութեան լոյսով։ Ստեղի ճիշդ Քրիստոնէութեան ու մարդկային բովանդակ պատմութեան մեծագոյն կինը հանդիսացող Ս. Կոյս Մարիամով։ Գրաւոր տեղը չէ որ ընդ կամ «երկրորդ ետև» կոչուած է ան եկեղեցւոյ Հայրերու կողմէ։

անմար վիճը ծուարած ձեր տեղում, դիմեցէք դէպի կեանք, դէպի ափխաստիճ, դէպի լոյս առաւօտ, անկոտրում հաւատով եւ լաւատեսութեամբ դէպի մեր ազգի ապագան, դէպի ձեր կործանուած հայրենի ափխարհի նոր ապագան։

Մի վախեցէք, մի տկարացէք, մի երկմտէք, հայլեցէք առաջ՝ ձեռք–ձեռքի տուած բոլորդ միասին, բոլորդ միասին, բոլորդ միակամ։ Ձեր մէջ թող չլինեն բաժանումներ, չլինեն անհամերաշխութիւններ։ Լաւ է որ ապրէք ու ափխաստէք իբրեւ հարազատ ցաւակից եղբայրներ, իբրեւ գործակիցներ, մէկդ միւսդ պատսպաց, մէկդ միւսդ օգնական, իբրեւ ազնիւ հաղարացիները մեր մայր հայրենիքի։

Ձեզ սպասում է ես մի ծանր ձմեռ, բայց մի վհատուէք, զօրվեցեք զօրից կը բացուի գարունը պայծառ, ձորից կը կանաչեն ձեր դաշտերն ու լեռները, ձորից կը ճնշեն երգերն ափխոյժ ձեր երեխաների։

Եւ ես միշտ աղօթելու եմ ձեզ համար, աղէտեալ հաղարների ու գիւղերի բոլոր վիրաւոր զաւակների համար։

«Տէր Աստուած, արթնացրու ի զօրութիւնը եւ եկ փրկելու մեզ։ Աստուած զօրութեանց, վերականգնիր մեզ, երեւեցրու մեզ ի երեսը եւ փրկիր մեզ» (Սաղմոս, ԼԺ. 3–5)։ Ամէն։

Ձեզ բոլորիդ իմ հայրական սէրը, իմ ուրախ բախած բարի մաղթանքները եւ իմ հայրապետական օրհնութիւնը։

Ողջ լեռուէ զօրացեալ Սուրբ Հոգւով։ Ամէն։

ՎԱԶԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

digitised by A.R.A.R.@